ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՆՈՐ ԳՐՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՑԵԼ

03.08.2017 11:30

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը հունիսի 28-ին գրությամբ դիմել էր Հայաստանի Հանրապետության ոստիկանապետին: Դիմումում մասնավորապես ասված էր, որ «Հայկական ժամանակ» թերթի 28.06.2017թ. http://armtimes.com/hy/video/2066 հղումով տեղադրված տեսանյութի համաձայն Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի հարակից տարածքում փաստաբաններ Լուսինե Սահակյանի և Արա Ջաքարյանի նկատմամբ ոստիկանները ցուցաբերել են բռնի գործողություններ: Փաստաբանների Պալատի նախագահը խնդրել էր Ոստիկանապետի հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ նշված միջադեպն ուսումնասիրելու և մեղավոր ոստիկաններին պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու կապակցությամբ: Գրությանն ի պատասխան նույն օրը ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության գնահատման նպատակով նշանակվել էր ծառայողական քննություն:
ՀՀ փաստաբանների Պալատը Ոստիկանությունից հուլիսի 31-ին ստացել է նոր գրություն, որով հայտնել են, որ նշանակված ծառայողական քննության ժամկետը երկարացվել է 30 օրով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })